«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1200 – Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

 2021 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 1200-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի աշխատակարգը, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդ ներկայացվող հաշվետվության ձևը սահմանելու մասին» N 1200 – Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Որոշման N 1 հավելվածում՝

ա. 3-րդ կետը լրացնել 7-րդ, 8-րդ և 9-րդ ենթակետերով հետևյալ բովանդակությամբ՝

«7) իր գործառույթների իրականացման արդյունքում վերհանված խնդիրների,

դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդին է ներկայացնում առաջարկներ.

8) յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող նիստում ծանոթանում է տվյալ տարվա հաշվետու ժամանակահատվածում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին կամ հատուկ կատեգորիայի զոհերին կամ հավանական զոհերին տրամադրած աջակցության և պաշտպանության գործընթացին.

9) անհրաժեշտության դեպքում այցելություններ է կատարում թրաֆիքինգի զոհերի համար թիրախային համարվող վայրեր՝ (հատուկ դպրոցներ, հոգեբուժարաններ, մանկատներ և այլ խնամքի հաստատություններում) ուսումնասիրություններ և իրազեկման աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաև այդ վայրերում արտագնա նիստեր կազմակերպելու համար։»

բ. 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

8. Հանձնաժողովի նիստին, ըստ անհրաժեշտության, խորհրդատուի կարգավիճակով կարող են մասնակցել պետական այլ շահագրգիռ մարմինների պատասխանատու աշխատակիցներ, հոգեբաններ, մանկավարժներ և այլ մասնագետներ։

գ. 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«11. Հանձնաժողովի որոշումներն ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից։ Հանձնաժողովի անդամների մեծամասնության համաձայնության դեպքում, ըստ անհրաժեշտության, մարդուն զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարգավիճակ տալու մասին հանձնաժողովի որոշման քաղվածքի մեկական օրինակ կարող է տրամադրվել նախանույնացումն իրականացրած իրավասու մարմնին, նույնացված զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին կամ նրա օրինական ներկայացուցչին։ Հանձնաժողովի քարտուղարը քաղվածքը հանձնելու մասին կատարում է համապատասխան գրառում հատուկ մատյանում՝ նշելով ստացողի անունը, ազգանունը, նրան աջակցող կազմակերպության անվանումը, ստանալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը։ Գրառման դիմաց դրվում է ստացողի ստորագրությունը։ Քաղվածքի օրինակելի ձևը և մատյանի ձևը հաստատվում է հանձնաժողովի կողմից՝ հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ։ Հանձնաժողովի մասնակիցների առարկությունների և առաջարկությունների մասին հայտարարությունները, եթե այդպիսիք եղել են, արտացոլվում են նիստի արձանագրությունում։»

դ. 13-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«2) իր կամ հանձնաժողովի անդամների նախաձեռնությամբ կամ իրավասու մարմինների միջնորդությունների հիման վրա հանձնաժողովի նիստ հրավիրելու անհրաժեշտության մասին իրազեկում ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում հրավիրում է հանձնաժողովի նիստ.»

ե. 13-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«7) իրավասու մարմիններից ստանում է տեղեկատվություն և յուրաքանչյուր կիսամյակ, մինչև հաջորդող ամսվա 15-ը Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդ է ներկայացնում սույն որոշման N 2 հավելվածով նախատեսվող հաշվետվությունը.»

զ. 18-րդ կետը ճանաչել ուժը կորցրած։

2) Որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։

Հավելված

ՀՀ կառավարության 2021 թվականի

---------- ի

N ---------- Ն որոշման

Հավելված N 2

ՀՀ կառավարության

2015 թվականի հոկտեմբերի 15-ի

N 1200-Ն որոշման

ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՀԵՐԻ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

- հաշվետու ժամանակահատվածում նույնացման ներկայացված հավանական զոհերի թիվը.

- հաշվետու ժամանակահատվածում նույնացված զոհերի՝

ա.թիվը,

բ.սեռը,

գ.տարիքը,

դ.քաղաքացիությունը,

ե.բնակության վայրը,

զ.թրաֆիքինգի/շահագործման տեսակը

- աջակցություն ստանալու նպատակով՝ ուղղորդված հավանական զոհերի, զոհերի/հատուկ կատեգորիայի զոհերի թիվը, օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց տրամադրված աջակցության տեսակները (պետական և ոչ պետական)

- հավանական զոհին/զոհերին հայտաբերող կառույցը/կառույցները (կազմակերպություն/ները).

- պաշտպանության համար ներկայացված միջնորդությունները և միջնորդության հիման վրա կայացրած որոշումները.

- հաշվետու ժամանակահատվածում զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին տրամադրվող սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայության շրջանակում կատարված ծախսերի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը.